Մրցույթ ՀՀ Արմավիրիր մարզի Գրիբոյեդովի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի / ծածկագիր 3.2-2/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

26.05.2015թ
Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզ Գրիբոյեդովի գյուղապետարան

ՀՀ Արմավիրիր մարզի Գրիբոյեդով գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-2/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-2/

1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը և գնահատմանը: Իրականացնում է դրամական միջոցների ընդունման, հաշվառման, հանձնման և պահպանման հետ կապված գործառույթները: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- միջնակարգ կրթություն
- իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկականն միջոցներով աշխատելու ունակություն

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցույթային հանձնաժողովին /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման համար ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին
- արական սեռի անձիք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը իսկականի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 չափի
- Անձնագրի պատճենը

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2015 թվականի հունիսի 11-ն է:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2015 թվականի հունիսի 30-ին ժամը 12:30-ին Գրիբոյեդովի գյուղապետարանի շենքում:
Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղապետարան /գ. Գրիբոյեդով Չարենցի 9/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն `ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-07-70 /: